ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/72

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ դատական դեպարտամենտ

Բողոք բերող՝ «Կոնսէլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացուցիչ՝ Տ. Զեյնալյանի

«Կոնսէլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ն. Առաքելյանի, Դ. Դանիելյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, տնտեսող լամպերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Կոնսէլ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 03.06.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ կասեցնել ՀՀ դատական դեպարտամենտի կողմից հայտարարված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով գնանշման հարցման մասին ընթացակարգը և Պատվիրատուից պահանջել վերանայելու նշված ընթացակարգի գնման առարկայի բնութագիրը՝ հավասար մրցակցային պայմաններ ստեղծելով պոտենցիալ այլ մատակարարների մասնակցությունն ապահովելու նկատառումներից ելնելով կամ անվավեր ճանաչել նշված մրցույթը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 03.06.2020թ.-ին:

03.06.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/72 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

10.06.2020թ.-ին, 24.06.2020թ.-ին և 03.07.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 24.06.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 03.07.2020թ.-ին:

2. «Կոնսէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Կոնսէլ» ՍՊԸ-ն 03.06.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ Դատական դեպարտամենտի կողմից Գնանշման Հարցման մասին «ԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով հայտարարության միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի կողմից չեն պահպանվել Գնումների մասին օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դրույթները:

Մասնավորապես, գնման առարկայի տեխնիկական բնութագիրը ձևակերպված է մասնագիտական թերություններով և որոշ պարամետրերի սխալ սահմանմամբ, ինչը սահմանափակում է հնարավոր մասնակից սուբյեկտների շրջանակը:»:

«Կոնսէլ» ՍՊԸ-ն 11.06.2020թ.-ին ներկայացրած բողոքի ամփոփմամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ Դատական դեպարտամենտի կողմից Գնանշման Հարցման մասին «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով հայտարարության միջոցով գնում կատարելու

ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի կողմից չեն պահպանվել Գնումների մասին օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դրույթները:

Պատվիրատուի կողմից գնման առարկայի տեխնիկական բնութագիրը ձևակերպված է մասնագիտական թերություններով և որոշ պարամետրերի սխալ սահմանմամբ, ինչը սահմանափակում է հնարավոր մասնակից սուբյեկտների շրջանակը: Մասնավորապես.

1. գնման առարկայի 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը կազմելիս Պատվիրատուն առաջնորդվել է GTV արտադրող ընկերության չափորոշիչներով՝ հղում տալով նրա արտադրանքին, այնինչ այդ արտադրողի լուսատուի հզորության առնվազն շեմը 24Վտ է, Պատվիրատուի կողմից մատնանշված 25Վտ-ի փոխարեն: Հանդիսանալով GTV ընկերության պաշտոնական գործընկերը Հայաստանում, կարող ենք վստահեցնել, որ Պատվիրատուի կողմից նիստի ժամանակ մատնանշված և որպես ապացույց ներկայացված ապրանքի նկարը, որի տեխնիկական պարամետրերն արտատպվել և ընկել են գնման առարկայի 2-րդ չափաբաժնի բնութագրի հիմքում, այսօր GTV ընկերության կողմից արտադրվում են արդեն իսկ 24Վտ հզորությամբ:

2. Պատվիրատուի կողմից գնման առարկայի չափաբաժինների տեխնիկական բնութագրի մեջ ներառված շահագործման տևողության ժամային չափորոշիչը սահմանափակում է առաջատար արտադրող ընկերությունների ապրանքատեսականու առաջարկումը, քանի որ առաջատար ընկերությունների մոտ ժամային հաշվարկն իրականացվում է նոմինալ կյանքի տևողության հաշվարկով և արտահայտվում է իրական թվերով, որն իրականում իր շեմով ավելի քիչ է, քան բազմաթիվ այլ արտադրողների կողմից մատնանշվող ոչ համարժեք պարամետրեր:

Առանձնապես Ձեր ուշադրությունն ենք ցանկանում հրավիրել մեր ընկերության կողմից 28.05.2020 թվականին «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով հրավերի պարզաբանման նպատակով Պատվիրատուին ներկայացված հարցման բովանդակության վրա, որտեղից ակնհայտ երևում է, որ մեր ընկերությունը, որպես պոտենցիալ մատակարար առաջարկում է ապրանքների նկարագրերի հզորության չափորոշիչի առնվազն շեմի հնարավոր չնչին փոփոխություն և ճշգրտում, ինչի արդյունքում Պատվիրատուն հնարավորություն կունենա ձեռք բերելու էլ ավելի արդյունավետ և էներգախնայող ապրանքատեսականի՝ տեխնիկական համարժեք պարամետրերով: Առավել ևս, երբ այդ պարամետրի փոփոխությունը նվազման կարգով կարող է միայն ծառայել հօգուտ

Պատվիրատուի և որևէ այլ բացասական ազդեցություն չունենալ տեխնիկական բնութագրով ներկայացված և պահանջվող որևէ այլ չափանիշի վրա, և որևէ կերպ չի կարող սահմանափակել հնարավոր արտադրողների շրջանակը, ինչպես մատնանշվել է Պատվիրատուի կողմից:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից ներկայացված ակնարկին առ այն, որ www.armeps.am կայքի Հայտեր դաշտում առկա տեղեկության հիման վրա տվյալ ընթացակարգին մասնակցած թվով 6 մասնակիցների երևան գալն արդեն իսկ վկայում է մրցակցության լայն շրջանակի մասին, ապա ցանցկանում ենք հավելել, որ մասնակիցների մեծ մասի կողմից չեն ներկայացվել առաջարկվող ապրանքատեսականու ապրանքային նշանը/կամ ֆիրմային անվանումը/կամ մակնիշը/կամ արտադրողի անվանումը և համապատասխան բնութագիրը, այլ պարզապես արտատպվել են տվյալ ընթացակարգով պահանջվող տեխնիկական բնութագիրը, ինչը չի կարող հավաստիք լինել հետագայում հաղթող ընկերության կողմից առաջարկվող ապրանքի համապատասխանությանը ընթացակարգի ճիշտ տեխնիկական պահանջին:»:

Ելնելով վերոգրյալից, «Կոնսէլ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ կասեցնել ՀՀ դատական դեպարտամենտի կողմից հայտարարված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով գնանշման հարցման մասին ընթացակարգը և Պատվիրատուից պահանջել վերանայելու նշված ընթացակարգի գնման առարկայի բնութագիրը՝ հավասար մրցակցային պայմաններ ստեղծելով պոտենցիալ այլ մատակարարների մասնակցությունն ապահովելու նկատառումներից ելնելով կամ անվավեր ճանաչել նշված մրցույթը:

3. <u>ՀՀ դատական դեպարտամենտի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 04.06.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/8225-2020 գրությամբ դիմել է ՀՀ դատական դեպարտամենտին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից 03.06.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 10.06.2020թ.-ին հրավիրված նիստին՝ ներկայացնելով նաև գրավոր դիրքորոշում:

Պատվիրատուն 05.06.2020թ.-ի թիվ ԴԴ-3-Ե-3747 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր՝ 04.06.2020 թվականի գրության՝ տեղեկացնում եմ, որ Դատական դեպարտամենտի կողմից հայտարարված թիվ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով գնանշման հարցմանն առնչվող անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը (հրավեր, հրավերի պարզաբանման մասին հայտարարություն և այլն) տեղադրված են «http://gnumner.am/» պաշտոնական կայքում:

Ինչ վերաբերում է դիրքորոշմանը, ապա Դատական դեպարտամենտը գնումներ իրականացնելիս առաջնորդվում է բացառապես պետական գնումների օրենսդրությամբ սահմանված դրույթներով, իսկ տվյալ դեպքում բողոք բերող անձի կողմից մատնանշվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդվածների մասեր և տրվել են ընդհանրական ձևակերպումներ՝ գնման առարկաների տեխնիկական բնութագրերի հետ կապված: Մասնավորապես, բողոքարկման հիմքում նշված չէ որևէ հիմնավոր փաստական հանգամանք, այն մասին, թե տեխնիկական բնութագրով սահմանված կոնկրետ որ չափորոշիչն է սահմանափակում հնարավոր մասնակիցների շրջանակը: Ավելին, «Կոնսէլ» ՍՊ ընկերության կողմից 28.05.2020 թվականին վերը նշված ծածկագրով հրավերի պարզաբանման նպատակով ներկայացված հարցման բովանդակությունից ակնհայտ երևում է, որ մասնակիցը առաջարկում է ապրանքների նկարագրերի հնարավոր փոփոխություն, ինչի արդյունքում կսահմանափակվի հնարավոր արտադրողների շրջանակը:

Ընդ որում, հարկ եմ համարում տեղեկացնել նաև, որ համաձայն «www.armeps.am» կայքի «Հայտեր» դաշտում առկա տեղեկության՝ տվյալ ընթացակարգի չափաբաժիններին մասնակցել են թվով 6 մասնակիցներ, որն արդեն իսկ վկայում է մրցակցության լայն շրջանակի ապահովման մասին:»:

Պատվիրատուն 30.06.2020թ.-ի թիվ ԴԴ-3-Ե-4351 գրությամբ հավելյալ հայտնել է նաև հետևյալը.

«Ուսումնասիրելով Ձեր կողմից էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված նյութերը՝ տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտի կողմից, լուսադիոդային լամպերի ձեռք բերման համար, գնման հայտում ներառված տեխնիկական բնութագրերը կազմվել են՝ հիմք ընդունելով վարչական շենքերում արդեն իսկ տեղադրված լուսադիոդային լամպերի բնութագրերը, ինչպես նաև արտադրող բազմաթիվ ընկերությունների կողմից առաջարկվող լուսադիոդային լամպերի տեխնիկական բնութագրերը, որի արդյունքում ապահովվել է բարձր մրցակցություն, ինչի մասին վկայում է տկյուլ գնման ընթացակարգի մասնակիցների քանակը:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/72 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով 25.05.2020թ.-ին հայտարարվել է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով՝

- 2-րդ չափաբաժնի համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ LED Լուսատու՝ առաստաղի, ներկառուցվող (встраиваемый), հզորությունը առնվազն 25Վտ, լուսային հոսքը առնվազն 2000ԼՄ, պաշտպանվածությունը առնվազն IP 20, գունային ջերմաստիճանը 3000Կ, շահագործման տևողությունը առնվազն 30 000ժ, միացման պարբերականության քանակը առնվազն 20000 անգամ: Լուսատուի տրամագիծը՝ 295-300 մմ, հաստությունը ոչ ավել քան 40մմ, առաստաղի ներդրվող անցքի տրամագիծը 280մմ, ձևը՝ կլոր, գույնը՝ սպիտակ: Ձևը տես նկ.1: GTV կամ համարժեք:

- 3-րդ չափաբաժնի համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ LED լամպեր հզորությունը առնվազն 15Վտ, տանձաձև, գույնը սպիտակ, գունային ջերմաստիճանը 4000-5500Կ, չափսերը՝ երկարությունը ոչ ավել քան 110մմ, տրամագիծը ոչ ավել քան 60մմ, կոթառի չափսը E27, պաշտպանվածությունը առնվազն IP20, լուսային հոսքը առնվազն 1200 լմ, շահագործման տևողությունը առնվազն 15000ժ: Ձևը տես նկ.2:

- 4-րդ չափաբաժնի համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ LED լամպեր հզորությունը առնվազն 13Վտ, տանձաձև, գույնը սպիտակ, գունային ջերմաստիճանը 3500-5000Կ, չափսերը՝ երկարությունը 110-135մմ, տրամագիծը 55-65մմ, կոթառի չափսը E27, պաշտպանվածությունը առնվազն IP20, լուսային հոսքը առնվազն 1000 լմ, շահագործման տևողությունը առնվազն 15000ժ: Ձևը տես նկ.2:

- Որպես հավելյալ պայման, սահմանվել է նաև, որ 2-րդ չափաբաժնի մասով հրավերով նախատեսվում է մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի կամ ֆիրմային անվանման կամ մակնիշի կամ արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:

www.armeps.am կայքում առկա տվյալների համաձայն՝ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ է ներկայացրել 6 (վեց) մասնակից, որից՝

- 2-րդ չափաբաժնի մասով հայտ չի ներկայացվել,
- 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել 6 մասնակից:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից 03.06.2020թ.-ին ներկայացված բողոքն հիմնավոր է մասնակի և ենթակա բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական

կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ ապրանքների գնման դեպքում հրավերով սահմանվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով 25.05.2020թ.-ին հայտարարված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով՝

- 2-րդ չափաբաժնի համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ LED Լուսատու՝ առաստաղի, ներկառուցվող (встраиваемый), հզորությունը առնվազն 25Վտ, լուսային հոսքը առնվազն 2000ԼՄ, պաշտպանվածությունը առնվազն IP 20, գունային ջերմաստիճանը 3000Կ, շահագործման տևողությունը առնվազն 30 000ժ, միացման պարբերականության քանակը առնվազն 20000 անգամ: Լուսատուի տրամագիծը՝ 295-300 մմ, հաստությունը ոչ ավել քան 40մմ, առաստաղի ներդրվող անցքի տրամագիծը 280մմ, ձևը՝ կլոր, գույնը՝ սպիտակ: Ձևը տես նկ.1: GTV կամ համարժեք:

- 3-րդ չափաբաժնի համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ LED լամպեր հզորությունը առնվազն 15Վտ, տանձաձև, գույնը սպիտակ, գունային ջերմաստիճանը 4000-5500Կ, չափսերը՝ երկարությունը ոչ ավել քան 110մմ, տրամագիծը ոչ ավել քան 60մմ, կոթառի չափսը E27, պաշտպանվածությունը առնվազն IP20, լուսային հոսքը առնվազն 1200 լմ, շահագործման տևողությունը առնվազն 15000ժ: Ձևը տես նկ.2:

- 4-րդ չափաբաժնի համար սահմանվել է հետևյալ պայմանները՝ LED լամպեր հզորությունը առնվազն 13Վտ, տանձաձև, գույնը սպիտակ, գունային ջերմաստիճանը 3500-5000Կ, չափսերը՝ երկարությունը 110-135մմ, տրամագիծը 55-65մմ, կոթառի չափսը E27, պաշտպանվածությունը առնվազն IP20, լուսային հոսքը առնվազն 1000 լմ, շահագործման տևողությունը առնվազն 15000ժ: Ձևը տես նկ.2:

- Որպես հավելյալ պայման, սահմանվել է նաև, որ 2-րդ չափաբաժնի մասով հրավերով նախատեսվում է մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի կամ ֆիրմային անվանման կամ մակնիշի կամ արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:

www.armeps.am կայքում առկա տվյալների համաձայն՝ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ է ներկայացրել 6 (վեց) մասնակից, որից՝

- 2-րդ չափաբաժնի մասով հայտ չի ներկայացվել,
- 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել 6 մասնակից:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով 25.05.2020թ.-ին հայտարարված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ նկարագրում են ձեռքբերվող ծառայության հատկանիշները և բացառում տարակերպ մեկնաբանությունը, սակայն Պատվիրատուն ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով տնտեսող լամպի համար սահմանելով *«հզորությունը առնվազն 25Վտ»* բնութագիր չի ապահովել մրցակցության հավասար պայմաններ՝ հնարավոր մասնակիցների համար, որի արդյունքում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ են առաջացել գնումների գործընթացում: Բացի այդ 2-րդ չափաբաժնի մասով նշված նման բնութագրի չափանիշը (պայմանը) օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք չեն այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ վերոնշյալներ հանգամանքերը հիմնավորվում են 2-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացված չլինելու փաստով:

Հարկ է նկատել, որ Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 2-

րդ չափաբաժնի մասով, որպես հավելյալ պայման, սահմանված մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի կամ ֆիրմային անվանման կամ մակնիշի կամ արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման պահանջի առկայությունը հնարավորությունն է տալիս Պատվիրատուին ձեռք բերել լրացուցիչ տեղեկատվություն՝ առաջարկվող ապրանքատեսակի չափանիշների՝ Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջներին համապատասխանելիության մասին:

Նման պայմաններում Բողոքներ քննող անձը գտնում է, որ Պատվիրատուի կողմից ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով տնտեսող լամպի համար սահմանված *«հզորությունը առնվազն 25Վտ»* պահանջը չի ելնում և հակասում է Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթներին:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ

լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք:

Ընկերությունը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի ապացույց առ այն, որ Պատվիրատուի կողմից Ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտած լինելու փաստը, այն, որ սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները խոչընդոտում են հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է, թե բողոքը ներկայացնելու պահին, և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Ինչ վերաբերում է Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին չափաբաժնի մասով հայտ ներկայացրած միայն 1 (մեկ) մասնակից լինելու հանգամանքին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ միայն մեկ մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքը չի կարող գնահատվել, որպես այնպիսի էական նշանակություն ունեցող փաստ, ըստ որի կարելի կլիներ արձանագրել հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ չապահովելու հանգամանքը, ըստ այդմ էլ՝ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի դրույթների խախտումը: Օրենքի նշված դրույթի բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ գնման առարկայի բնութագիրը պետք է ապահովի ոչ թե մեկից ավելի հայտի ներկայացման պարտադիր պայման, այլ պետք է ապահովի հնարավոր մասնակիցների հայտ ներկայացնելու հնարավորություն:

Սույն դեպքում Ընկերությունը, բողոքով 1-ին չափաբաժնի մասով նշելով միայն մեկ մասնակցի հայտ ներկայացնելու հանգամանքը, որպես գնման առարկայի բնութագրի խտրական լինելու փաստ, չի ապացուցել հնարավոր մասնակիցների մասնակցության անհնարինությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները հիմնավոր են մասնակի՝ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով, իսկ

Ընթացակարգի մնացած չափաբաժինների մասով Հրավերով սահմանված պահանջները հիմնավոր են և չեն սահմանափակում հնարավոր մասնակիցների հավասար իրավունքները: Հատկապես այն դեպքում, երբ Ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտ են ներկայացրել թվով 6 (վեց) մասնակից, որով նույնպես հերքվում են Բողոքաբերի կողմից նշված հնարավոր մասնակիցների մրցակցության ոտնահարումը և գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների առկայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից 03.06.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/72 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը՝ 2-րդ չափաբաժնի մասով:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**